ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 218-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ԱՆԴՐՈՒՇԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետի պահանջը և քաղաքացու դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչ Արմեն Անդրուշի Գրիգորյանին /ծնված՝ 04.10.1961թ./ սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.08 հա վարելահողը /կադաստրային ծածկագիր 10-042-0175-0041/ ցածրարժեքից փոխադրել բարձրարժեքի:

2. Հողատեսքը փոխադրվում է որպես պտղատու այգի՝ կորիզավոր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 12
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 219-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի ԹԻՎ 63-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ 17-ՐԴ ԿԵՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ԱՁ Ռոզա Կիրակոսյանի կողմից գործունեության դադարեցման մասին ներկայացված դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Գլաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 8-ի՝ «Գլաձոր համայնքի վարչական տարածքում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերին ոգելից խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն տալու մասին» թիվ 63-Ա որոշման հավելվածի 17-րդ կետի գործողությունը դադարեցնել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 12
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 220-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱՅԱՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշմամբ հաստատված կարգը, Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 101-Ն որոշման հավելվածի 1.8-րդ կետի ա. և բ. ենթակետերով սահմանված դրույքաչափերը, նույն որոշման հավելվածի 1.8-րդ կետի ա. և բ. ենթակետերի 2-րդ պարբերությունները և ԱՁ Գայանե Մուշեղյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի Թանահատի փողոց թիվ 35/1 հասցեում գտնվող առևտրի սրահում (մակերեսը՝ 46 քառ. մ) ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառք իրականացնելու համար ԱՁ Գայանե Մուշեղյանին /հարկ վճարողի հաշվառման համար 76865132/ տալ թույլտվություն:

2. Ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակ, ԱՁ Գայանե Մուշեղյանից գանձել 6600 /վեց հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ տեղական տուրք, որից 3300 /երեք հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար, 3300 /երեք հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվությունը տրվում է 2021 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 12
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 221

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 12-րդ կետի պահանջը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների անցկացման տեղամասային կենտրոն սահմանել՝

1) Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում՝ մշակույթի տունը, հասցեն՝ Գլաձոր համայնք Գետափ բնակավայր փողոց 19, շենք 1ա
2) Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրում՝ Գլաձորի միջնակարգ դպրոցը, հասցեն՝ Գլաձոր համայնք Գլաձոր բնակավայր փողոց 33, շենք 40
3) Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրում՝ մշակույթի տունը, հասցեն՝ Գլաձոր համայնք Վերնաշեն բնակավայր Թանահատի փողոց, շենք 56:

2. Սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմնին, թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնը տիրապետող կազմակերպության ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 15
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 222

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 18-րդ կետի պահանջը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների քարոզչական պաստառները փակցնելու համար Գլաձոր համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Գլաձոր համայնքի Գետափ բնակավայր, փողոց 17, շենք 2/բ, 40 քմ
2) Գլաձոր համայնքի Գետափ բնակավայր, փողոց 19, շենք 18/1, 20 քմ
3) Գլաձոր համայնքի Գետափ բնակավայր, փողոց 19, շենք 26, 20 քմ
4) Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայր, փողոց 33, տեղեկատվական տախտակի վրա, 2 քմ
5) Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայր, փողոց 33, երկողմանի էլեկտրական հենասյունների վրա, 20 քմ
6) Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայր, Թանահատ փողոց, շենք 56, 10 քմ
7) Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայր, Թանահատ փողոց, շենք 35, 5 քմ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 15
Գլաձոր համայնք